«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ԴԵՌ ՄԱՆԿՈՒՅ ԵՍ ՍԻՐԵԼԻ, ԹԱՆԿԱԳԻՆ «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մեր գյուղի գրեթե բոլոր ընտանիքները բաժանորդագրվում էին, եթե հիշողությունս չի դավաճանում, ստանում էինք 250-300 օրինակ թերթ: Ասեմ՝ որպես դպրոցի սկզբնական կոմերիտկազմակերպության քարտուղար, թերթի բաժանորդագրությամբ զբաղվել եմ նաեւ ես:

Հիշում եմ նաեւ, թե ինչպես գյուղամիջում մարդիկ մտքեր էին փոխանակում թերթում կարդացած այս կամ այն նյութի վերաբերյալ, էլ չեմ խոսում այն մասին, թե ինչ ոգեւորություն ու հրճվանք էին զգում նրանք, երբ թերթում հոդված էր տպագրվում մեր գյուղի մարդկանց մասին, առավել եւս, երբ այդ հոդվածները լուսանկարներով էին:

Եվ ահա այսօր իմ մանկական հիշողություններում պահվող թերթը նշում է իր առաջին համարի լույսընծայման 100 տարին: Այսօրվա «Վրաստանը» արժանավոր ճանապարհ է անցել՝ միշտ հավատարիմ մնալով իր պատմական առաքելությանը՝ կամրջել երկու եղբայր ժողովուրդներին: Գուցե առաջին հայացքից դա այնքան էլ դժվար չէր, սակայն, եթե հիշենք, թե վերջին 30 տարիների ընթացքում ինչ ուղի է անցել «Վրաստանը», ապա կարելի է միայն գլուխ խոնարհել խմբագրության աշխատակիցների, առաջին հերթին թերթի խմբագիր Վան Բայբուրթյանի առջեւ, ով կարողացավ թերթի քաղաքականությունը վարպետորեն վարել այդ տարիների սոցիալական դրվածքների փլուզման, ազգայնականության ու ժողովրդավարության ընդհարման, պետական հեղաշրջումների ու «գունավոր հեղափոխությունների» փոթորկուն ծովում: Եվ դա զարմանալի չէ, քանի որ Վանը, մինչեւ «Սովետական Վրաստանի» խմբագիր դառնալը, մոսկովյան կենտրոնական թերթերի ու գործակալությունների սեփական թղթակիցն էր Թբիլիսիում եւ Երեւանում: Ինքս անձամբ ականատես եմ եղել, թե ինչպես Մոսկվայում, Պետերբուրգում, Երեւանում Վան Բայբուրթյանը ջանադրությամբ փաստավորում էր թերթի դիրքորոշումը այս կամ այն իրավիճակում, ապացուցում դրա արդարացիությունը եւ իրադրությունների զարգացումը, ի վերջո, ապացուցում էր նրա արդարացիությունը:

Թանկագին Վան, սիրելի «վրաստանցիներ», ի սրտե շնորհավորում եմ մեր սիրելի պարբերականի մեկդարյա հոբելյանը, ձեզանից յուրաքանչյուրին մաղթում անձնական երջանկություն, ստեղծագործական վերելք: Դուք արժանի եք մեծարման, մեծագույն հարգանքի:

Մեծ սիրով՝

ՆՈՐԱՅՐ ԹԵՎԱՆՅԱՆ

Մոսկվայի հայ համայնքի նախագահ

ԱՅՍՕՐ «ՎՐԱՍՏԱՆՆ» ԱՆՀՐԱԺԵՇՏ Է, ՔԱՆ ԵՐԲԵՎ

Ստացվել է այնպես, որ Վրաստանում ապրող հայերս ունենք երկու հայրենիք՝ Հայաստան ու Վրաստան, ուստիեւ՝ երկու մշակույթ, երկու պատմություն... Բայց կան եւ այնպիսիք, ովքեր այդ երկուսը կապող-կամրջողի պատասխանատվություն են ստանձնում ու, հակառակ խոչընդոտների, առաջ ու առաջ գնում՝ ամեն մի քայլը միմի աղյուս դարձնելով հայ-վրացական բարեկամության ամրապնդման գործում: Այսպիսին է մեր «Վրաստանը» ու արդեն հարյուր տարի: Նրա գոյությունն, անշուշտ, պայմանավորված է խմբագրությունում աշխատող նվիրյալներով եւ, առաջին հերթին, խմբագիր Վան Բայբուրթյանով: Անձամբ ինձ համար նման նվիրյալներից էր Անահիտ Բոստանջյանը, ում Վանը հրավիրել էր թերթում աշխատելու, երբ հետխորհրդային շրջանում տպագիր մամուլի ավանդական տարածումն այլեւս հնարավոր չէր: Այդ տարիներին, Անահիտի՝ թերթի ոչ միայն լրագրողի, այլեւ տարածման ու բաժանորդագրման բաժնի ղեկավարի, վստահելի անձանցից մեկը Ախալքալաքի-ում ես էի, սիրով օգնում էի կազմակերպել «Վրաստանի» բաժանորդագրումը ամբողջ շրջանով մեկ: Շրջում էինք գյուղեգյուղ եւ ամեն մի այց ավարտվում էր «Վրաստանի» էջերում հայտնվող Անահիտի հիանալի ակնարկներով՝ գյուղացիներից ամենաարժանիի մասին... իսկ առանցքում հերոսի նյութի՝ որպես Վրաստանի արժանավոր քաղաքացու, կերպարն էր: Այդ իմաստով հատկապես մեծ էր ու մեծ է «Վրաստանի» դերը, իսկ այսօր՝ հատկապես: Այն առավել քան անհրաժեշտ է հայ ու վրացի ժողովուրդներին կամրջելու տեսանկյունից՝ ի հեճուկս երրորդ ուժի, ով մեր ընդհանրությունը բացառելու եւ միայն բացասականն արձանագրելու կործանիչ միտում ունի: Երեւի հենց այդ է պատճառը, որ «Վրաստանը» ապրեց ու ապրում է անկանգ: Ու արդեն 100 տարի, պարբերաբար, իր բազմահազար ընթերցողին հեղափոխում դեպի դրականը՝ թույլ չտալով փոխել Վրաստանում ապրող հայ քաղաքացու արժանի կերպարը:

Շնորհավոր, անցյալ ու ներկա, սիրելի «վրաստանցիներ», արժանի սերունդներ քեզ, իմ հարազատ «Վրաստան»....

ՀԱՄԼԵՏ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր

«ՎՐԱՍՏԱՆԻ» ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այս դպրոցի «շրջանավարտներն» են Վրաստանում ու նրա սահմաններից դուրս կայացած շատ լրագրողներ:

Ես՝ ինքս ինձ այս դպրոցի սան եմ համարում եւ մաղթում «Վրաստանին» նոր հարյուրամյակներ վիրահայերի նոր սերունդների կողքին լինելու համար:

Իմ խորին երախտագիտությունն եմ բերում թերթի անխոնջ աշխատակազմին՝ հանձինս գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանի:

«Վրաստանն» ինձ համար նաեւ Բենիկ Սեյրանյան է, Անահիտ Բոստանջյան: Հավերժ փառք նրանց հիշատակին:

«Վրաստանը» նաեւ մեր բալիկներն են, մեր կյանքի զարդն ու մեր ապագան:

Թող միշտ լինի «Վրաստանը»:

ԳԻՍԱՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Վիրահայոց թեմի Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» կենտրոնի ղեկավար

ԱՅՆ, ՈՐ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՄ ՎԱՆՔԻ ԴՊՐՈՑՈՒՄ, ՀԵՆՑ «ՎՐԱՍՏԱՆԻՑ» ԻՄԱՑԱ

«Վրաստանի» հետ իմ ծանոթությունը՝ որպես ընթերցող, սկսվեց Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցում: Տարրական դասարանի մեր ուսուցչուհի, երջանկահիշատակ Անժելա Ամիրխանյանը, մոտեցավ ինձ ու հարցասերիս պարզեց թերթի հերթական համարը եւ, մատնացույց անելով մեր դպրոցի մասին պատմող նյութը, խնդրեց կարդալ: Փոքրուց անհագ հետաքրքրասեր էի: Ամեն անգամ դպրոց մտնելիս՝ նայում էի Վանքի զանգակատանը, հետո մտնում դասարան ու, անկախ դասի թեմայից, ընդհատում էի եւ նույն հարցը տալիս՝ ի՞նչ եկեղեցի է այնտեղ կանգնած:

Հարգելի Անժիկը միայն իրեն հատուկ խիստ հայացքն էր նետում դասը խանգարողիս, բայցեւ ամեն անգամ հետաձգում պատասխանը: Եվ ահա մի օր, գոհ ժպիտով, մոտեցավ նստարանիս ու, այս անգամ առանց որեւէ խստության, մայրաբար հորդորեց կարդալ, ասաց, որ «գաղտնիքն» այստեղ է, բացի այդ, կվարժվեի ընթերցանության մեջ, կզարգացնեի գրավոր խոսքս եւ, վերջապես «Վրաստանն» այսուհետ կունենար իր նոր ընթերցողը՝ հանձինս ինձ: Այսօրվա պես հիշում եմ այդ նյութը, որն իմ մեջ հպարտության անասելի զգացում էր առաջացրել՝ որպես Վանքի դպրոցի սան: Այդ էր ու այդ, սիրեցի «Վրաստանը», որովհետեւ այդուհետ հպարտանալու բազմաթիվ առիթներ տվեց՝ պատմելով Վրաստանում հայկական հետքի եւ, ընդհանրապես բազմերանգ վրացական մշակույթի հայակերտ կոթողների մասին: Եվ այդ ամենը շատ նուրբ մատուցված հրապարակումներում, առանց որեւէ ազգամիջյան սրման ու խաթարման: Ընդհակառակը՝ ի նպաստ հայ-վրացական ամրապնդվող բարեկամության... Տարիներ են անցել: Այսօր թիվ 104-ի սան է իմ դուստրը, ու ես նույն հետեւողականությամբ նրան եմ պարզում «Վրաստանը»՝ ձեւավորելով նոր ընթերցող: Կարծում եմ, սա վիրահայերիս սուրբ պարտականությունն է՝ մեր արժեքների փոխանցումը եկող սերունդներին: Մեր հարյուրամյա հոբելյարն այդ արժեքներից մեկն է, ում շարունակության համար պատասխանատու ենք բոլորս: Սիրելի «Վրաստան» ու «վրաստանցիներ», շնորհավորում եմ յուրաքանչյուրիդ, շնորհակալություն ներդրման ու թերթը պահելու համար: Թող հոբելյանական տարին նոր թափ բերի ու խթան դառնա ստեղծագործական ձեր գործունեության մեջ:

ՄԱՐԻ ԱՌԱՔԵԼՈՎԱ

Վրացահայերի միություն ՀԿ ղեկավար

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ. «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՆ ԻՄ ԱՂՈԹՔՆԵՐՆ ԵՆ»

Վիրահայ անվանի մանրանկարիչ Մերուժան Շահումյանը օրերս նշեց ծննդյան 70 ու ստեղծագործական գործունեության 55-րդ տարեդարձերը:

Մերուժան Շահումյանը, ինչպես նշում են փորձագետները, վիրահայ կերպարվեստի Թիֆլիսյան դպրոցի՝ Հովնաթանյանների (17-19-րդ դարեր) արժանավոր հետնորդը, հայկական ժամանակակից մանրանկարչության ներկայացուցիչներից մեկն է: Ռուսական գրական-փիլիսոփայական, Մոսկվայում լույս տեսնող «Լոգոս» ամսագրի խմբագիր, աբեղա Սիմոնը (Կովալյով), կայք-էջում տեղադրված իր՝ *«Մերուժան Շահումյանի կրոնա-փիլիսոփայական գեղանկարչության ուղերձը»* մենագրության մեջ, նրա մանրանկարչությունը դիտում է՝ *իբրեւ գեղանկարչի կամքի ու Արարչի կամքի միաձուլման արտահայտությամբ, դեպի փրկություն տանող արվեստ:*

Բոլորս հիշում ենք Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ (2011-2016 թթ.) Մերուժան Շահումյանի՝ համայնքում կերպարվեստի ավանդույթների պահպանմանն ուղղորդված բեղուն գործունեությունը: Նրա նախաձեռնած՝ հայ, վրացի ու այլազգի տարբեր սերնդի գեղանկարիչների մարդաշատ ցուցահանդեսները Թբիլիսիում, Վրաստանի հայ ու վրացի նկարիչների փոխադարձ ցուցահանդեսները Գյումրիի, Էջմիածնի, Երեւանի պատկերասրահներում:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Մերուժան Շահումյանի հետ հարցազրույցը:

- ***Ի՞նչ կուզենայիք, որ Ձեր արվեստը տար դիտողին:***

- Իմ արվեստը երկու մասից է կազմված՝ սրբանկարչություն եւ աբստրակտ: Ինձ մոտ դրանք միմյանց չեն հակասում, հակառակը՝ իրար լրացնում են իրենց խորհրդով: Եթե մանրանկարչության մեջ ամեն ինչ իրական է, աբստրակտը այդ նույնը մեկ ուրիշ իրականության մեջ է մատուցում: Իմ նկարչության գլխավոր իմաստը ես դարձրել եմ սրբանկարչությունը: Սրբանկարն իմ խնդրանքը, իմ աղոթքն է առ Աստված ու նաեւ փորձը՝ մարդուն տանել դեպի Աստված:

- ***Միջնադարում ծաղկում ապրող հայ մանրանկարչությունը՝ Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ, Թորոս Տարոնեցի, Մոմիկ, Հակոբ Ջուղայեցի, Իգնատիոս, Գրիգոր... ձեւավորել է կայուն ավանդույթներ, որի հետեւողական արտահայտությունն է նաեւ ժամանակակից մանրանկարչությունը: Ձեր կարծիքով, ո՞րն է մանրանկարչության առանձնահատկությունը, նրան տարբերող բնորոշիչը:***



- Համաշխարհային կերպարվեստում հայ մանրանկարչությունը ունի ուրույն, անկրկնելի դիմագիծ: Նա խիստ տարբերվում է ռուսական, բյուզանդական եւ մանրանկարչության մյուս դպրոցներից: Առանձնանում է հեղինակայնությամբ, գունագեղությամբ, արտահայտած իմաստով եւ ընդգծված անկեղծությամբ:

- ***Մերուժան Շահումյանի երկու որդիներից որի՞ն է փոխանցվել հայրական տաղանդը:***

- Երկուսն էլ, իրականում, տարված են նկարչությամբ: Օժտված են նկարելու շնորհքով, եւ դա անում են մեծ ոգեւորությամբ: Անկեղծ ասած, ինձ ուրախացնում է, որ ունեն իրենց ոճը եւ իրենց գործն անում են առանց իմ ուղղորդումների:

- ***Ինչո՞ւ եք կրոնը համարում մարդուն վերափոխելու միջոց:***

- Սրբանկարչությունն ունի իր խորհուրդները: Այդ կերպարները «կանչում» են նայողին, ձգում, որովհետեւ խոսող, աղոթող դեմքեր են եւ մարդու հոգում անհետք չեն մնում: Ծնվում է, մի տեսակ, երկխոսություն դիտողի եւ սրբանկարի միջեւ: Այդպես հեշտ է մարդուն դեպի Աստված տանելը, այդ փորձը դարերից է եկել...

- ***Ճանաչո՞ւմ եք որեւէ ժամանակակից հայ, վրացի կամ այլազգի մանրանկարչի եւ Ձեր վերաբերմունքը նրա գործերին:***

- Անուններ չեմ ուզում նշել այն մտավախությամբ, որ կարող եմ մեկին բաց թողնել... Մեր շփումը միմյանց հետ եղել է Վրաստանի ու Հայաստանի նկարիչների ընդհանուր ցուցահանդեսներում: Դրանցում ներկայացված գործերը ինքնին մեզ հանգեցրել են համեմատությունների, արվեստի տարբեր դպրոցների բնորոշ կողմերը զգալուն, զարգանալուն, գիտեցածը նորով լրացնելուն:

- ***Աշխարհի բոլոր բանաստեղծները, անկախ ազգությունից, երգել ու երգում են մաքուր, լուսավոր սերը: Մերուժան Շահումյանի կարծիքով՝ ե՞րբ է սերը մաքուր, լուսավոր:***

- Ինձ համար մաքուր, լուսավոր սերն այն է, երբ պատրաստ ես զոհաբերության: Դա ինքնահատնումի, քեզ նմանին ծառայելու կարողություն է, երբ լցված ես մշտապես զոհաբերելու, տալու եւ ոչ թե ստանալու զգացումով:

- ***Շնորհակալություն հետաքրքիր պատասխանների համար:***

Միանալով բոլոր շնորհավորանքներին՝ թույլ տվեք «Վրաստան» թերթի անձնակազմի եւ նրա ընթերցողների անունից նույնպես ի սրտե շնորհավորել Ձեզ:

Ցանկանում ենք Ձեզ ու Ձեր ընտանիքին անսասան առողջություն, հոգեկան խաղաղություն, կյանքի երկար ճանապարհ: Թող Ձեր կյանքում երբեք չխամրի՝ Աստծո տված ստեղծագործական ներշնչանքի լույսը:

Ջրուցեց ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

COVID - 19

«ՊԱՐԵՏԱՅԻՆ ԺԱՄԻ» ՉԵՂԱՐԿՈՒՄ ԱՌԱՅԺՄ ՉԻ ԾՐԱԳՐՎՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Միջգերատեսչական համակարգող խորհուրդը քաղաքացիներին կրկին կոչ է անում հնարավորինս կրել դիմակներ՝ ինչպես ներսում, այնպես էլ՝ դրսում, ինչը վիրուսի տարածումը կանխելու կարեւորագույն պայմաններից մեկն է:

Նիստի ավարտից հետո, Վրաստանին հիվանդությունների վերահսկման եւ ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն հայտարարեց, որ խորհուրդը քննարկել է երկիր պատվաստանյութերի ներկրման հետ կապված լոգիստիկ խնդիրները, ինչպես նաեւ միջազգային գործընկերների եւ արտադրողների հետ ընթացող բանակցությունները:

- Այսօրվա հանդիպմանը խոսվեց պարետային ժամը չեղարկելու մասին, եւ, ինչպես գիտեք, միանգամից այսքան սահմանափակումների վերացումը անցանկալի է: Սահմանափակումներից յուրաքանչյուրի վերացումից հետո, մենք պետք է սպասենք եւ հետեւենք մեկ կամ երկու շաբաթ, ապա միայն որոշումներ կայացնենք: Այս փուլում մենք անհրաժեշտ չհամարեցինք պարետային ժամի չեղարկումը): Երեւի, եթե մենք համաճարակային իրավիճակը պահենք այս շրջանակներում, այդ հարցն էլ կբարձրացվի,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն:

Հիշեցնենք, որ «Պարետային ժամը» խախտելու համար տուգանքը կազմում է 2 հազար լարի:

Ավելացնենք, որ մարտի 8-ից Վրաստանում սկսվել է սահմանափակումների վերացման հերթական փուլը: Լեռնադահուկային հանգստավայրերում իրենց աշխատանքն են վերսկսել ճոպանուղիները, ինչպես նաեւ բոլոր ռեստորաններում ու սրճարաններում թույլատրվում է աշխատանքը փակ տարածքում (բացի շաբաթ եւ կիրակի օրերից), իսկ առեւտրի կենտրոններն ու հագուստի շուկաները կարող են աշխատել նաեւ հանգստյան օրերին:

ԷԿԱՏԵՐԻՆԵ ՏԻԿԱՐԱՁԵ. «ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՆ ԻՐԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԸՆՏՐԵԼ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԸ»



(Սկիզբը՝ 1-ին էջում)

Բացի այդ, իհարկե, պատվաստանյութի ընտրությունը նույնպես լինելու է կամավոր, մենք մեր քաղաքացիներին տալիս ենք հնարավորություն՝ ընտրել այն պատվաստանյութը, որին իրենք ավելի շատ են վստահում: Ինչ վերաբերում է որակյալ բաղադրիչին եւ պատվաստանյութերի տարբերությանը, ապա այստեղ գլխավորը պատվաստանյութի ճանաչումն է խիստ կարգավորիչով,- հայտարարեց Եկատերինե Տիկարաձեն:

Նախարարի խոսքով, մարտի 13-ին Վրաստան է ներբերվում AstraZeneca կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի առաջին խմբաքանակը՝ 43 200 դեղաչափ:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՁԵ. «ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԵԾԱՊԵՍ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ Է ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՄԲ»

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԴԻՄԱԿ ԿՐԵԼՈՒ ՑՈՒՑԱՆԻՇԸ ՆՎԱԶԵԼ Է 43 ՏՈԿՈՍՈՎ, ԻՍԿ ԴԱ ՇԱՏ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի հայտարարությամբ, արդեն երկու ամսից ավելի է՝ երկրում շարունակվում է համավարակային իրավիճակի կայունացման միտումը: Նրա խոսքով, փետրվար եւ մարտ ամիսներին հաստատված սահմանափակումները մեղմելու մասին որոշումն ընդունվել է այս հիմքով:

Այնուամենայնիվ, Ամիրան Գամղրելիձեն ընդգծեց նաեւ կանոններին հետեւելու անհրաժեշտությունը, քանի որ Վրաստանում ամեն օր նոր դեպքերի թիվը դեռ մեծ է եւ ցույց է տալիս, որ վարակը դեռ շրջանառվում է երկրում:

- Ինչպես հաճախ ենք ասում, երկիրը շարժվում է դեպի կայունացում: Արդեն երկուսուկես ամիս կայունացման միտումը շարունակվում է, ինչը թույլ տվեց գնալ սահմանափակումների մեղմացման: Այդուհանդերձ, կրկնում եմ, որ դա ոգեւորման առիթ չէ:

- Թեեւ դրական արդյունքով թեստերի քանակը վերջին ամիսների ընթացքում նվազման միտում ուներ, սակայն վերջին չորս օրվա ընթացքում դրական թեստերն ավելացել են: Սա կապված է նաեւ դիմակ չկրելու հետ: Նախկինում 75 տոկոս էր դիմակ կրելու ցուցանիշը, հետո՝ 66 տոկոս, հիմա՝ 43 տոկոս,- ասաց Ամիրան Գամղրելիձեն ու քաղաքացիներին դիմակ կրելու եւ ցուցանիշը 95 տոկոսի հասցնելու կոչ արեց: Նա բնակչությանը խորհուրդ տվեց նաեւ խուսափել մեծ հավաքույթներից ու խնջույքներից:

Հիշեցնենք, որ Վրաստանի խորհրդարանն ընդունեց վարչական իրավախախտումների օրենսգրքի փոփոխությունների օրինագիծը, որով խստացվում է հանրային վայրերում դիմակ կրելու պահանջն անտեսելու պատիժն ու կրկնապատկվում երկրորդ անգամ խախտման տուգանքը:

Մինչ այժմ օրենքը 20 լարի տուգանք էր սահմանում հանրային վայրում դիմակ չկրելու համար: Նոր փոփոխություններով, 2-րդ եւ ավելի խախտման դեպքում քաղաքացին կվճարի 40 լարի:

Կարգավորումներով նաեւ նախատեսվում է պատժի խստացում այն կազմակերպությունների նկատմամբ, որտեղ կկրկնվի առանց դիմակի քաղաքացիների մուտքը. սեփականատերը կտուգանվի 1 000 լարիով (ավելի քան 300 դոլար):

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 119 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 119 145 944 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 2 642 279 հազարը: Ապաքինվել է 94 միլիոն 758 077 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ-ն** է, որտեղ կա հաստատված **29 925 902** դեպք: Այստեղ մահացածների թիվը **543 721** է, երկրորդ տեղում՝ **Հնդկաստանը**, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **11 308 846**-ի, մահացածներինը՝ **158 326**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **11 284 269**, մահացել՝ **273 124** մարդ: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **4 360 823**, վարակի հետեւանքով մահացել՝ **90 734** մարդ: Ռուսաստանին հաջորդում են Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իսպանիան, Իտալիան, Թուրքիան ու Գերմանիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **177 104**-ի, մահացածներինը՝ **3 243**-ի, ապաքինվածներինը՝ **165 718**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **238 383** մարդ: Վարակից մահացել է **3 262,** ապաքինվել՝ **230 244** մարդ:

Վերջին տվյալներով, **Վրաստանում** վարակվել է **274 377,** մահացել՝ **3 634,** ապաքինվել՝ **267 764** մարդ:

*Մարտի 12-ին կորոնավիրուսով վարակման **332** նոր դեպքերից **185-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 20, Իմերեթիում՝ 51, Քվեմո Քարթլիում՝ 8, Շիդա Քարթլիում՝ 14, Գուրիայում՝ 13, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 18, Կախեթիում՝ 20, Մցխեթա-Մթիանեթիում՝ 0, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 2, Սամցխե-Ջավախեթիում՝ 1:***

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՎԵՐԱՎԱՐԱԿՄԱՆ ԴԵՊՔ

Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի տնօրեն Ամիրան Գաղրելիձեի հայտարարությամբ, Վրաստանում կորոնավիրուսով վերավարակման մեկ դեպք է արձանագրվել:

Գամղրելիձեն հաղորդել է, որ վիրուսը երկու անգամ էլ թեթեւ տեսքով է արտահայտվել: Բուժառուն հիվանդացել է մոտ երեք ամիս անց:

- Նույն մարդու մոտ արդեն երկրորդ անգամ է կորոնավիրուս հաստատվել: Տարբեր շտամեր չեն, նույնն է, վարակը կրկնվել է 2,5-3 ամիս անց: Ինչ վերաբերում է տարիքին, վարակվածը տարեց չէ,- ասել է Գամղրելիձեն:

Հիշեցնենք, որ Վրաստանում սկսում են կորոնավիրուս տարած հիվանդների, այսպես ասած, հետկովիդյան հետազոտություն: Նպատակը՝ վիրուսից հետո հնարավոր բարդությունների ախտահանումն է: Պատահականության սկզբունքով ընտրված 400 հիվանդի համար բոլոր ախտորոշումներն անվճար կլինեն: Մասնագետները նպատակ ունեն ուսումնասիրել հետկովիդյան սինդրոմի օրինաչափությունը:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՎԱՐԱԿՎԱԾ ԵՎ ԲՈՒԺՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԿԱՆՑՆԵՆ ՀԱՏՈՒԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոցի տնօրեն Թենգիզ Ցերցվաձեի հայտարարությամբ, մարտի 9-ից Վրաստանում սկսվում են COVID-19-ն անցկացրած բուժառուների հետազոտությունները: Նրա խոսքով, հետազոտություններն անցկացվելու են Թբիլիսիում եւ ընդգրկում են հիվանդների, ովքեր կորոնավիրուսը հաղթահարել են վերջին երկու ամիսների ընթացքում:

- Սա մեր առողջապահական համակարգում ամենալուրջ իրադարձություններից մեկն է, հետկովիդյան համախտանիշով հիվանդների հետազոտությունը: Այս հետազոտությունը երկրի մասշտաբով չէ, այն կլինի միայն Թբիլիսիում եւ կընդգրկի 400 հոգու: Ստուգումն իրականացվում է՝ ելնելով այն հանգամանքից, որ որոշ հիվանդների մոտ հետկովիդյան շրջանում, մեկ կամ երկու ամիս անց նկատվում է թուլություն, հոգնածություն, վատագույն դեպքում դեպրեսիա կամ սրտի բողոքներ, հիշողության կորուստ, անհանգստություն եւ այլն: Դա անհանգստացնում է ամբողջ աշխարհին, այդ թվում՝ Վրաստանին, քանի որ դեպքերը հաճախակի են դառնում,- հայտարարել է Թենգիզ Ցերցվաձեն:

Նրա խոսքով, հիվանդները կընտրվեն պատահականության սկզբունքով:

- Սա գիտական հետազոտություններում ամենաճշգրիտ մեթոդն է, նման հետազոտությունից ստացված արդյունքները ամենահուսալին են: Մենք ունենք Թբիլիսիում վերջին երկու ամսվա ընթացքում COVID-19-ը անցկացրած հիվանդների ճշգրիտ ցուցակը: Այս ցուցակը մշակվում է հատուկ ծրագրի կողմից, որը պատահական ընտրում է անհատական անուններ:

Նրանց հետ կապ կհաստատեն մեր օպերատորները եւ կհրավիրեն հետազոտության,- ասաց Թենգիզ Ցերցվաձեն:

Նրա խոսքով, ուսումնասիրության նպատակն է պարզել, հետկովիդյան համախտանիշի հաճախականությունը COVID-19-ն անցկացրած բուժառուների մոտ: Գործիքային հետազոտություններին զուգահեռ, կմշակվի նմանատիպ հիվանդների պետական ծրագիր:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՀԱՐՑՈՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Եվրոպայի դեղորայքի վերահսկման գործակալության ներկայացուցիչները Եվրամիության անդամ երկրներին կոչ են անում խուսափել կորոնավիրուսի դեմ ռուսական արտադրության Sputnik V պատվաստանյութի հաստատումից, քանի դեռ գործակալությունը դրա արդյունավետության եւ անվտանգության մասին մանրամասն չի տեղեկացվել:

Նշենք, որ ռուսական վերոնշյալ պատվաստանյութի գնահատման նպատակով, փորձարկումներ են անցկացվում Եվրամիության երեք երկրներում՝ Հունգարիայում, Սլովակիայում եւ Չեխիայում:

Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԲՈԼՈՐԻՍ ԽՆԴԻՐՆ Է ՉԳՆԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Ինչպես եւ կանխատեսում էինք ունենք հիվանդացության բավական աճ: Այս պահին ունենք ծավալված 9 բժշկական կենտրոն, մոտ 100 ազատ մահճակալ, բայց ուզում եմ զգուշացնել, որ մահճակալների թիվն անսպառ չէ, եւ պետք է ամեն ինչ անել, որպեսզի մեր հիվանդների թիվն ավելին չլինի այն կարողություններից, որոնք մենք ունենք,- ասաց առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդգծեց, որ խնդիրը լրացուցիչ սահմանափակումներ սահմանելու անհրաժեշտության բացառումն է, իսկ դա պայմանավորված է յուրաքանչյուր քաղաքացու վարքագծով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՐԿՐԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՈՒ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՀԱՆԴԻՊՄԱՆ

Հայաստանի նախագահը հանդիպման է հրավիրում վարչապետին եւ ընդդիմության ներկայացուցիչներին: Արմեն Սարգսյանի նախաձեռնած բանակցությունները հնարավոր է անցկացվեն մարտի 13-ին:

«Պետության եւ ընդհանուր ճանապարհներ որոնելու նպատակով, ստեղծված իրավիճակը քննարկելու եւ ելք գտնելու համար, մարտի 13-ին, ժամը 12:00-ին ես վարչապետին, խորհրդարանական խմբակցությունների ղեկավարներին եւ «Հայրենիքի փրկության շարժման» անդամներին հրավիրում եմ բանակցություններ վարել նախագահի նստավայրում»,- ասված է Հայաստանի նախագահի մամուլի ծառայության կողմից տարածած հաղորդագրության մեջ:

Հիշեցնենք, որ Հայաստանում ներքաղաքական իրավիճակը դեռ լարված է: Ընդդիմությունը չի դադարում բողոքի ցույցեր անցկացնել Երեւանում եւ պահանջել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը:

Հայաստանում քաղաքական ճգնաժամը սրվել է նրանից հետո, երբ Հայաստանի ԶՈՒ Գլխավոր շտաբը պահանջել կառավարության հրաժարականը:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՎ ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Մարտի 6-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ:

Նիկոլ Փաշինյանը նախ շնորհավորել է զրուցակցին այդ բարձր պաշտոնին նշանակվելու կապակցությամբ: Խոսելով երկկողմ հարաբերությունների մասին՝ Նիկոլ Փաշինյանը բարձր է գնահատել ԱՄՆ կողմից Հայաստանին տրամադրվող մշտական աջակցությունը եւ ԵԱՀԿ Մինսկի խմբում ԱՄՆ ունեցած դերակատարումը: Կողմերն անդրադարձել են պատերազմից հետո տարածաշրջանում տիրող իրավիճակին:

Ընդգծվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակում խաղաղ գործընթացի վերսկսման անհրաժեշտությունը:

Պետքարտուղարն ընդգծեց Հայաստանի հետ գործընկերային հարաբերությունների զարգացման կարեւորությունը: Նա բարձր է գնահատել ժողովրդավարության ասպարեզում Հայաստանի արձանագրած ձեռքբերումները եւ վստահեցրել, որ ԱՄՆ-ը շարունակելու է բարեփոխումների համար Հայաստանին տրամադրվող օժանդակությունը:

Երկուստեք կարեւորվել է համագործակցությունը Հայաստանում օրենքի գերակայության ամրապնդման, կոռուպցիայի դեմ պայքարի, արդարադատության համակարգի եւ ոստիկանության բարեփոխումների ուղղությամբ: Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել ամերիկյան կողմի գնահատականների ու բարեփոխումների ասպարեզում օժանդակություն տրամադրելու պատրաստակամության համար:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՒԺՈՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏՆ ԱԶԱՏՎԵՑ ՊԱՇՏՈՆԻՑ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարության համաձայն, Օնիկ Գասպարյանը իրավունքի ուժով ազատվել է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտոնից:

Ըստ այդ հայտարարության, առաջնորդվելով Հայաստանի սահմանադրության եւ «Զինվորական ծառայության ու զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի օրենքի վերաբերյալ դրույթներով՝ վարչապետի կողմից 2021թ. փետրվարի 25-ին հանրապետության նախագահին էր ներկայացվել առաջարկություն՝ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Օնիկ Գասպարյանին զբաղեցրած պաշտոնից ազատվելու վերաբերյալ՝ կցելով համապատասխան հրամանագրի նախագիծը:

2021թ. փետրվարի 27-ին վարչապետի աշխատակազմ են մտել հանրապետության նախագահի առարկությունները վերոնշյալ նախագծի վերաբերյալ:

«Նախագահի կողմից ներկայացված առարկությունները վարչապետի կողմից չեն ընդունվել, ինչի մասին 2021թ. փետրվարի 28-ին գրություն է ուղարկվել հանրապետության նախագահին՝ համապատասխան հիմնավորումներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 35.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետներում Հայաստանի նախագահը չի ստորագրել վարչապետի կողմից ներկայացված նախագիծը եւ չի դիմել Սահմանադրական դատարան՝ հիմք ընդունելով սահմանադրության 139-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաեւ «Զինվորական ծառայության ու զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 35.1-ին հոդվածի 6-րդ մասը եւ նույն օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը՝ 2021թ. մարտի 10-ից ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Օնիկ Գասպարյանն իրավունքի ուժով ազատված է համարվում զբաղեցրած պաշտոնից»:

Մարտի 10-ից իրավունքի ուժով ՀՀ Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետի պաշտոնից ազատված Օնիկ Գասպարյանն ուղերձ է հրապարակել, ըստ որի, Հայաստանում սահմանադրության ու իրավունքի գերակայությունն ապահովելու եւ ուժը բացառապես իրավունքի հիման վրա իրացնելու նպատակով, դիմել ՀՀ վարչական դատարան:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ COVID-19-Ի ԴՐԱՄԱՀԱՎԱՔԻ ԾԱԽՍՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստան» համահայկական հիմնադրամը կորոնավիրուսի դեմ պայքարի արդյունավետությունն ուսումնասիրող Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովին ներկայացրեց «Covid-19 - Հայաստան. միասին հաղթահարենք համավարակը» դրամահավաքին հավաքագրված գումարների ծախսման ուղղությունները:

Դրամահավաքն իրականացվել է հիմնադրամի նախաձեռնությամբ, 2020թ. մարտի 13-ից օգոստոսի 27-ն ընկած ժամանակահատվածում, որի ընթացքում հավաքագրվել է 325 մլն 608 հազար 555 դրամ: Այդ գումարից 154,8 մլն դրամը հավաքագրվել է մասնավոր կազմակերպություններից, 18 մլն 115 հազար դրամը՝ արտերկրում եւ Հայաստանում ապրող ֆիզիկական անձանցից, իսկ 152 մլն 675 հազար դրամը՝ «Հայաստան» հիմնադրամի Սփյուռքում գործող մարմիններից: Հանգանակած գումարից 695 հազար 244 ԱՄՆ դոլարն ուղղվել է տարբեր բժշկական պարագաների ու սարքավորումների ձեռքբերմանը, կարիքավոր ծերերին ամենամսյա սննդի մատակարարմանը եւ բազմաթիվ հայրենակիցների Հայաստան վերադարձին, մոտ 300 հազար դոլար ուղղված է եղել շտապօգնության ծառայության անձնակազմին, բժշկական սարքավորումներին է ուղղվել 275 հազար դոլար, որոնցից առավել խոշորները՝ 8 արհեստական օդափոխության սարք, դյուրակիր թվային ռենտգեն՝ 2 միավոր, թթվածնային 123 խտացուցիչ: Բուժսարքավորումներն ու պարագաները բաշխվել են առողջապահության նախարարությանը, տարբեր բուժհաստատություններին, ինչպես նաեւ պաշտպանության նախարարության եւ պաշտպանության բանակի ռազմաբժշկական վարչություններին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԵՐ՝ ՄԱՐԶՊԵՏԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի կառավարության մարտի 11-ի նիստին մասնակցում էին նաեւ հանրապետության մարզպետերը: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքով, առաջիկայում այդ պրակտիկան կշարունակվի:

-Ընթացս միջավայրին ծանոթացան մեր գործընկերները, հետագայում ավելի ակտիվ եւ արդյունավետ կդարձնենք նրանց մասնակցությունը: Ուրախ եմ ձեզ տեսնել, պարոնայք մարզպետեր,- ասաց կառավարության ղեկավարը:

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՏԱԿ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը միջնորդություն է ներկայացրել երկրի նախագահ Արմեն Սարգսյանին Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետի պաշտոնում Արտակ Դավթյանին նշանակելու համար:

Արտակ Դավթյանը ԶՈՒ ԳՇ պետի պաշտոնը զբաղեցրել է 2018 թվականի մայիսի 24-ից մինչեւ 2020 թվականի հունիսի 8-ը: 2020 թվականի հուլիսի 16-ին ՀՀ վարչապետի որոշմամբ, նշանակվել է ՀՀ ԲՏԱՆ ռազմարդյունաբերության կոմիտեի նախագահ: 2020 թվականի նոյեմբերի 11-ին ազատվել է այդ պաշտոնից: Դավթյանը 2021թ. մարտի 9-ին ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանի հրամանով նշանակվել էր հատուկ հանձնարարություններով ավագ սպա:

Նշենք, որ Հայաստանի նախագահը 2021թ. մարտի 11-ին իր առարկություններով վերադարձրել է Արտակ Դավթյանին ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ նշանակելու մասին վարչապետի առաջարկությունը եւ կից հրամանագրի նախագիծը: Նույն օրը ստացվել են վարչապետի հիմնավորումները նախագահի առարկությունների վերաբերյալ: Երկրի նախագահը չի ստորագրելու հրամանագրի նախագիծը եւ չի դիմելու Սահմանադրական դատարան:

ԵՌԱԲԼՈՒՐՈՒՄ ԿՍՏԵՂԾՎԻ ՆՈՐ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

«Եռաբլուր» զինվորական պանթեոնում կստեղծվի Արցախյան ազատամարտում զոհվածների եւ անհայտ կորածների հուշահամալիր:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, հաստատվել է հուշահամալիրի ստեղծման աշխատանքների համակարգման աշխատանքային խմբի անհատական կազմը:

Աշխատանքային խումբը կղեկավարի Հայաստանի վարչապետի աշխատակազմի ղեկավար Արսեն Թորոսյանը:

ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՈՐԾԸ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ Է

Հայաստանի քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում ավարտվել է 2021թ. փետրվարի 12-ին եւ 20-ին Ազատության հրապարակում անցկացված հանրահավաքների ժամանակ Վազգեն Մանուկյանի կողմից՝ իշխանությունը զավթելու, սահմանադրական կարգը բռնի տապալելու, բռնություն գործադրելու հրապարակային կոչեր կատարելու դեպքերի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը: Քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է Հայաստանի գլխավոր դատախազություն՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ գործը դատարան ուղարկելու միջնորդությամբ:

Նշենք, որ ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Հայաստանի քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՐՏ

14.03.2021 Դատավորի կիրակի

Մեծ Պահքի հինգերորդ կիրակին կոչվում է Դատավորի կիրակի:

20.03.2021 Սուրբ Գրիգոր Լուսավորչի սոսկալի չարչարանքների ու Խոր Վիրապ մտնելու հիշատակության օր

Ըստ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու տոնացույցի, նշվում է Մեծ պահքի 6-րդ կիրակիի նախորդ շաբաթ օրը: Տոնը կատարվում է ի հիշատակություն Խոր Վիրապում Սուրբ Գրիգոր Լուսավորչի կրած չարչարանքների:

Ըստ պատմական աղբյուրի, Խոր Վիրապում կրած 13 տարիների չարչարանքներից հետո Սուրբ Գրիգոր Լուսավորչը, դուրս գալով ստորգետնյա զնդանից, Քրիստոսի լույսն է տարածում հայոց աշխարհում՝ դառնալով պետականորեն ճանաչված Հայ եկեղեցու առաջին հովվապետը:

ՖՈՒՏԶԱԼ

ՈՒԵՖԱ-Ի ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ԵՐԿՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՄԻՆ

Մարտի 5-ին եւ 10-ին Թբիլիսիում ու Երեւանում ՈՒԵՖԱ Եվրո 2022-ի որակավորման խմբային փուլի երրորդ եւ չորրորդ մրցափուլի շրջանակներում ֆուտզալի մարզաձեւում անցկացվեցին հանդիպումներ Վրաստանի եւ Հայաստանի հավաքականների միջեւ:

Երկու հանդիպումներն էլ, համավարակի պայմաններում գործող կանոնակարգերի համաձայն, անցկացվեցին առանց հանդիսատեսի:

Երկու հանդիպումներում էլ Վրաստանի հավաքականը ցուցաբերեց հասուն խաղ եւ առավելության հասավ, համապատասխանաբար՝ 5:0 եւ 3:2 հաշվով:

Նշենք, որ Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները, Ֆրանսիայի ու Ռուսաստանի հավաքականների հետ, հանդես են գալիս ՈՒԵՖԱ-ի Եվրո 2022-ի որակավորման փուլի երկրորդ խմբում: Չորրորդ մրցաշարից հետո, Վրաստանի հավաքականը վաստակեց 7 միավոր եւ խմբում զբաղեցնում է 2-րդ տեղը: Առաջատարը Ռուսաստանն է (12 միավոր), երրորդ տեղում Ֆրանսիան է (2), իսկ Հայաստանը՝ չորրորդ տեղում (1): Հաջորդ հանդիպումը Վրաստանի հավաքականը կանցկացնի ապրիլի 9-ին Թբիլիսիում՝ Ֆրանսիայի ազգային հավաքականի դեմ եւ, հաղթանակի դեպքում, կստանա Եվրոպայի առաջնության ուղեգիր:

ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2021

ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ԹՈՌՆԻԿԵ ՂԻՓԻԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎՐԱՏԵՍԻԼ-2021-ԻՆ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ

Ընթացիկ տարվա մայիսի 18-ին, 20-ին եւ 22-ին Նիդերլանդների Ռոտերդամ քաղաքում կանցկացվի «Եվրատեսիլ 2021» երգի փառատոնը:

Վրաստանի ներկայացուցիչ Թոռնիկե Ղիփիանին մայիսի 20-ին կայանալիք երկրորդ կիսաեզրափակչին հանդես կգա իր իսկ հեղինակած «You» երգով: Երգը անգլերեն է եւ միավորում է տարբեր ժանրեր՝ ռոք, փոփ ռոք եւ բլյուզ ռոք:

Մրցութային երգի տեսահոլովակը նկարահանվել է մի քանի վայրերում: Երգի պրեմիերան կկայանա մարտին:

Եվրատեսիլ-2021-ին Հայաստանը չի մասնակցի: Այդ մասին մարտի 5-ին հայտարարեց հայկական հեռարձակող «APMTV» հեռուստաընկերությունը՝ հաստատելով, որ իրենք հրաժարվում են մասնակցել 2021 թվականի երգի մրցույթին երկրում ստեղծված քաղաքական իրավիճակի պատճառով:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԴԵՂԻՆ ԵՐԹՈՒՂԱՅԻՆՆԵՐԸ ԱՄԲՈՂՋՊԵՍ ԿՓՈԽԱՐԻՆՎԵՆ

Մարտի 10-ին Թբիլիսիի կառավարության հերթական նիստում քաղաքապետ Կախա Կալաձեն հայտարարեց, որ մինչեւ այս տարվա ավարտը Թբիլիսիում միկրոավտոբուսների ավտոպարկն ամբողջությամբ կթարմացվի:

Քաղաքապետի խոսքով, տրանսպորտային քաղաքականության համաձայն, մայրաքաղաքում կգործի 1000 նոր միկրոավտոբուս, իսկ մնացած երթուղիները սպասարկելու են 8 մետրանոց ավտոբուսներ:

- Թբիլիսիի միկրոավտոբուսների ընկերության հետ բանակցությունները գրեթե ավարտված են: Ընկերությունը կգնի մեր կողմից ձեռք բերած 300 միավոր միկրոավտոբուս, ապա՝ նաեւ լրացուցիչ 400 միկրոավտոբուս: Այս ամենը կավարտվի մինչեւ տարեվերջ: Առաջիկա օրերին Թբիլիսիի քաղաքապետարանը կհայտարարի շուկայի ուսումնասիրություն եւ կսկսի մրցույթի ընթացակարգը,- ասաց Կախա Կալաձեն ու հավելեց, որ տրանսպորտային քաղաքականության շրջանակներում ընթանում է այսպես կոչված դեղին ավտոբուսների փոխարինման գործընթացը:

- Տրանսպորտային քաղաքականությունը բաղկացած է բազմաթիվ բաղադրիչներից: Ամենակարեւորը, գոյություն ունեցող ավտոպարկի արդիականացումն է եւ հին ավտոբուսները ամբողջովին նորերով փոխարինումը: Այս գործընթացն արդեն սկսվել է: Ավտոբուսները ձեռք են բերվել, եւ մենք սպասում ենք դրանց ներմուծմանը: Բացի այդ, մենք ցանկանում ենք ներկայացնել մոտ 180 միավոր 8 մետրանոց եւ 200 միավոր 10 մետրանոց ավտոբուսներ,- հայտարարեց Կախա Կալաձեն:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Քաղաք Իտալիայում: 4.Շրջան եւ քաղաք Արցախում: 9.Անասունի գլխի հարված: 10.... եւ դժոխք: 11.Հիմա, այժմ: 12.«Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ ... եմ սիրում» (Ե.Չարենց): 13.Սահման, վերջնագիծ: 15.Վարպետը թբիլիսյան բարբառով: 17.Աշխարհի ամենաերկար գետը: 19.Ստորադասական շաղկապ: 21.Դատարկ, փուչ: 22.Ե՛ւ լեռ, ե՛ւ մայրաքաղաք Պատմական Հայաստանում: 24.Ցանովի բույս Վրաստանում: 25.Ռեժիսոր Ջեյմս Քեմերոնի ֆիլմերից: 27.Ատամը՝ արեւմտահայերենով: 29.Հերոս «Ինչու է աղմկում գետը» ֆիլմում: 33.Մակերեսի չափման միավոր: 34.Կնոջ հայրը: 35.Ձայնարկություն: 36.Չորրորդ նոտան: 37.Ունկնդրել, ականջալուր լինել: 38.... մարգարեի անվան կիրակնօրյա դպրոց Վիրահայոց թեմում: 39.Արեւելյան ժողովրդական սիրավեպ «... եւ Քյարամ»: 41.Վրաց հայտնի շախմատիստ ... Չիբուրդանիձե: 44.Գյուղատնտեսական գործիք: 46.Խոսելու, զրուցելու նյութ: 49.Հայ առաջին կին դիվանագետ ... Աբգար: 51.Վրաստանի նախագահ ... Զուրաբիշվիլի: 53.Ժամանակակից: 55.Լիքը, առատ: 56.Հնդիկ հանրահայտ պոետ: 58.Մի գնա: 60.Զույգ թիվ: 61....յի վկաներ: 63.Հայոց կաթողիկոս ... Աշտարակեցի: 64.Հայկական առաջին ֆիլմերից: 65.Սիբիրյան գեղեցիկ եղնիկ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հայազգի հերոս, ով թաղված է Խուստուփի լանջին: 2.Բայի ժամանակներից: 3.Հարցական դերանուն: 4.Հավերժ, հավետ: 5.Հարթուկ: 6.Անձնական դերանուն: 7.Շաբաթվա օր: 8.Ֆիլիպինների մայրաքաղաքը: 9.... քող: 14.Գեղեցիկ, հոտավետ ծաղիկ՝ պանի ...: 16.Նահանգ ԱՄՆ-ում: 18.Նախադասության գլխավոր անդամ: 20.Արաքս գետի անվանումներից: 23.Պարսիկ հանրահայտ բանաստեղծ: 25.Բանկային համակարգ Թբիլիսիում եւ Երեւանում: 26.Քաղաք Ֆրանսիայում: 28.Թբիլիսահայ գրող ... Հրաչյա: 30.Թուրք գրող, հրապարակախոս ... Աքչա: 31.Ժխտական նախածանց: 32.Կոմիտասի ծննդավայրը: 35.Դեղձով եւ ընկույզով չիր: 40.Վշտանալ, լացել, մորմոքալ: 42.Մուստաֆա Քեմալ ...թուրք, օսմանյան բանակի սպա: 43....խած, ...ալի: 45.Իտալական ֆուտբոլային ակումբ: 47.Քաշվել, կարմրել, անհարմար զգալ: 48.Հայաշատ քաղաք Ֆրանսիայում: 50.Ասորեստանի մայրաքաղաքը: 51.Ս.Փարաջանովի ֆիլմերից «Լեգենդ ...ի ամրոցի մասին»: 52.Մ.Գորկու երկերից «... Բուլիչեւը եւ ուրիշները»: 54.Հարցական դերանուն: 57.Խոտի խուրձ: 59.«... Կովկասն իմ ոտքի տակ» (Ա.Պուշկին): 62.Վահան Միրաքյան «Լալվարի ...ը»:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ուղեկցող: 9.Եսաուլ: 10.Քարտ: 11.Մայոնեզ: 13.Անլուր: 16.Լաց: 17.Լաք: 19.Ասլան: 22.Դուբայ: 24.Աղավնի: 25.Վահի: 27.Թերեզա: 29.Ասուլիս: 32.Պեկին: 33.Բաստիա: 35.Աղել: 38.Նեւա: 40.Էկրան: 41.Մաուս: 44.Քիլի: 47.Նրա: 48.Էմմա: 50.Լինչի: 51.Շահ: 52.Ոխ: 53.Լակ: 54.Վդա: 55.Միշտ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Խոշալ: 2.Մկկոց: 3.Չոքել: 4.Ջետա: 5.Սայլ: 6.Կլոր: 8.Ղազախ: 12.Յամբ: 14.Նասա: 15.Ուհան: 18.Բյազ: 19.Աղասի: 20.Լվալ: 21.Նիլս: 23.Ավեստա: 26.Հապա: 28.Եղան: 29.Ակի: 30.Ունակ: 31.Իդեա: 34.Սեւիլիա: 36.Ղրիմ: 37.Լնդախտ: 39.Կուր: 42.Անիվ: 43.Սաշա: 45.Իլլ: 46.Ինկ: 48.Էհմ: 49.Մոշ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍ ՄՈՒՏՔԱՐԹՈՒՄ՝ ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԹՈՆԵՅԼՈՒ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445